

ՏԵԱԿԱՆ ՏԱՑԵՍՈՒԹԻՒՆ

Եւողջաւեան էանոներ պղոց համար :

Ա. Տղոց կեցած տեղին օդը յստակ պիտի ըլլայ ու բարեխառն : Խիստ պղտիկ տղուն տաք տեղ հարկաւոր է . բայց կամաց կամաց պէտք է վարժեցընել միջակ ու բարեխառն օդի :

Բ. Եարդուս կենացը խիստ հարկաւոր է լոյսը . ուստի մութ տեղ մեծցողը՝ արեգական լոյսը ըմայելելովը շուքի մէջ մանկուած բոյսի պէս թոռմած ու տժկոյն կըլլայ : Բայց ալզտի տղոց աչուըները չափազանց լուսէն ալ պէտք է զգուշացընել՝ զոր օրինակ արեւուն դիմացը պէտք չէ թողուլ որ կենան ու արեւուն նային . ճրագն ալ աչուըներուն սաստիկ պէտք չէ մօտեցընել, և այն . վասն զի դեռ իրենց աչքին կազմուածքը տկար ըլլալով՝ կըխըֆիսըֆին, ու աս գէշ սովորութիւնը մեծնաննէ ալ կըմնայ վրանին . թող որ աչուընին ալ կրտկարանայ :

Գ. Տղան ոտք ելլելէն ետքը պէտք է վարժեցընել որ ցրտի դիմանայ ու խաղալով բնութիւնը տաքնայ . ասիկայ շատ առողջարար բան է . անոր ներհակը, զգուշութիւննք ըսելով գոցելը, ծածկելը, դուրս չհանելը շատ վնասակար է տղուն առողջութեանը :

Դ. Դեղի օդը քաղաքինէն օգտակար է . բայց ուր ալ ըլլայ՝ նայելու է որ ցած, գոց ու խոնաւ տեղ չըլլայ բնակութիւնը, հապա բարձր ու չոր . ան ատենը տղան ողջ ու առողջ կըմեծնայ : Ելլաւ է թողուլ որ թեթև հագուստով, գլուխը բաց պտըտի տըղան, քան թէ չափազանց զգուշութեամբ ցաւագար ու ճըռզած մեծնայ :

Ե. Տղուն պառկած տեղը աղէկ է որ ըլլայ աւելի տանը հարաւային կամ արեւելեան կողմը . բնակարանին պատերը չոր, ու անկողինը պատէն հեռու . ու թէ որ սաստիկ ցուրտ

կամ խոնաւ չէ, բնակարանին օդը ստէպ ստէպ փոխելու է :

Զ. Պէտք չէ անհոգ ըլլալ տղոց ակուաներուն վրայ՝ ասոնք պիտի փոխուին ու տեղը ուրիշ պիտի գայ ըսելով . վասն զի առջի ակուաները աւելի շուտ կրնան փտտիլ, ու ետեւէն ելածներն ալ կըփըտեցընեն : Եկուաները աղէկապահելու համար զգուշանալուն յանկարծական սաստիկ պաղու տաք բաներ կերցընելէն կամ խմցընելէն . ինչպէս թէ որ ձմեռը տաք կերակուր ուտելու ժամանակը տղան պաղ պաղ ջուր խմէ վրան : Եերակուրի մնացուքը տղուն ակուաներուն մէջ մնալով պատճառ կըլլան փտութեան . ուստի պէտք է կակուղ գրիչով մը կամ մասնաւոր ակուայ մաքրելու գործիքով մաքրել տալ ակուաները, ու ետքը գաղջ ջրով թրջած լաթով մը սրբել : Ը ատ օգտակար է նաև երկու իրեք օրը մէյմը վրձինով մաքրել ակուաները, բայց զգուշութեամբ որ լնտերքը չըչարչըրին : Ես ամէն զգուշութիւններէն վերջն ալ ճար ըլլար, երբեմն աս կամ ան ակուան կըփըտի . պէտք է հանել տալ, քան թէ քիչ մը ցաւ տալ չուզելով՝ երկար ցաւերու ու քովի ակուաներն ալ փըտեցընելու պատճառ ըլլալ :

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՄՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղելպէրէն այլը :

Բանութեան զարմանալի տեսարան, ներուն կարգն են նաև լեռներուն մէջի ու երկրիս տակի մանր ու խոշոր այրերը, որ քարանձաւ ալ կըսուին : Եսոնց մէջ ոմանք իրենց ընդարձակութեանը համար խիստ անուանի են, ոմանք ալ իրենց մէջի քարացած ջրերուն համար՝ որ հայերէն պաղանձաւ կըսէնք, վասն զի աս քարացած ջրերը աղբիւրներուն վրայէն կամ